

Ժանմանց յերկուս թագաւորութիւնս. եւ ի վիճակէ բաժնոյ անաւրինացն¹ արանց քաջաց, ի տոհմէ նախարարացն Յայոց, տալ զանձինս անհամարս ի նահատակութիւնս ի վերայ ուխտին սրբոյ² եկեղեցւոյ, եւ կիսոց համբերել³ կապանաց եւ բանդից վասն երկնաւոր յուսոյն բազմաժամանակ տելողութեամբ. հեղուլ եւ քահանայից ընտրելոց Աստուծոյ եւ ճշմարտապէս հովուաց⁴ զարիւն ի պարանոցաց իւրեանց ի վերայ ընտրեալ բանաւոր հաւտին Քրիստոսի. եւ ոմանց յընկերակցաց նախարարացն եւ յայլ ազատ մարդկանէ՝ դառնալ յետս յուխտէ սրբութեանն եւ անշէջ յաւիտենից հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն⁵ սատանայի եւ նորին արբանեկացն: 6 Եւ գրել զայս ամենայն միւսչէ ցար սկզբան մարգպանութեանն Յայոց Վահանայ Մամիկոնեից տեառն եւ մեծի զաւրավարին Յայոց եւ մարգպանի. եւ դադարեալ հանգուցից⁶ յայնմ տեղոջ զբան վաստակոց պատմութեանցս այսոցիկ:

Բ. Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Յայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ի նոցանէ զժամանակաց եւ զդարուց աշխարհիս Յայոց բազմադիմի յեղափոխութիւնս, յստոյգ⁷ եւ յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս, այր բանիբուն գիտութեամբ եւ լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից եւ յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ: 2 Սա զնուագումն⁸ թագաւորութեան Արշակունւոյն Արտաւանայ եւ զզաւրանալն Ստահրացւոյն⁹ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ ստուգապէս յաւրինուածով կարգեալ դրոշմեաց. զքինախնդրութիւնն խոսրովու եւ զտարակուսանս գոռոզացեալ Ստահրացւոյն. զխորհուրդն եւ զխոստմունսն¹⁰ գտողի հնարս յաղագս մահուն խոսրովու. զխորամանկութեանն զմտածութիւնն Անակայ եւ զսպանումն ի նմանէ զնորուն¹¹ խոսրովու՝ նենգաւոր խաբէութեամբ. զմատնումն յայնմիտէ զաշխարհիս¹² Յայոց ի ձեռս թագաւորութեան աստարի. զվախուցանել դայեկացն զորդիս խոս-

1 *ՁԱտ.* օրինացն

2 *ՏՏ.* սուրբ

3 *Ձ.* համբերեալ

4 *Ձ.* հովաց

5 *Ձ.* պատրաստելոցն

6 *Ձ.* յանկուցից

7 *Ձ.* ստոյգ

8 *Ձ.* զնուադումն

9 *Ձ.* *այստեղ եւ յետոյ՝* ստարիացւոյն

10 *Ձ.* զխոստումն

11 *ԲԳտ.* *չիք* զնորուն

12 *ՁՏՏ.* զաշխարհիս. *այսպէս ըստ Նոր. Բիւզ.*